ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՄՈՎՍԵՍ ՉԱՊԱՆՅԱՆԻ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ (Ք.ՄՈՍԿՎԱ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

   Մովսես Չապանյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության թվայնացման վարչության պետի տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Քաղաք Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2022թ. հուլիսի 24-ից հուլիսի 25-ը:

4. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն Եվրասիական տնտեսական միության էլեկտրոնային թվային ստորագրությունների փոխադարձ ճանաչման գծով միջգերատեսչական աշխատանքային խմբի հերթական նիստին:

5. **Հրավիրող կողմը.**

   Եվրասիական տնտեսական հանձնաժողով (Պետական գնումների և մրցակցության դեպարտամենտ):

6. **Քննարկված թեմաները.**

   Հանդիպումը վարում էր ԵՏՀ Պետական գնումների և մրցակցության դեպարտամենտի պետական գնումների իրավական ապահովման, մեթոդաբանության և քաղաքականության բաժնի պետ Ելենա Իվանովան: Հանդիպմանը անմիջական ներկա էին ներկայացուցիչներ Ղազախստանի Հանրապետությունից, Բելառուսի Հանրապետությունից, Հայաստանի Հանրապետությունից, ԵՏՀ Պետական գնումների և մրցակցության դեպարտամենտից և «ԳազԻնֆորմՍերվիս» ընկերությունից: Մյուս երկրների մասնակիցները միացած էին տեսակապի միջոցով:

   Հանդիպման ժամանակ «ԳազԻնֆորմՍերվիս» ընկերության ներկայացուցիչ Սերգեյ Կիրյուշկինը ներկայացրեց «Միջազգային պայմանագիր. Էլեկտրոնային թվային

ստորագրության փոխադարձ ճանաչման հիմնական հասկացությունները և մոտեցումները» թեմայով զեկույց, որտեղ ներկայացվում էր էլեկտրոնային թվային ստորագրությունների երկրների միջև փոխադարձ ճանաչման ՄԱԿ կողմից հաստատված ստանդարտները (UNCITRAL) և ԵՄ կողմից կիրառվող իրավական ապահովման պրակտիկան:

Զեկույցի ժամանակ անդրադարձ կատարվեց ԵՄ 1999/93 (eIDAS) դիրեկտիվային և վիճակագրության միջոցով ներկայացվեց թե ԵՄ անդամ որ երկրներում, ինչ եղանակներով է ներդրվել դիրեկտիվայի պահանջները, որ երկրներն են փոխադարձ ճանաչում էլեկտրոնային թվային ստորագրությունները և այլն: Զեկույցի ներկայացումից հետո քննարկումներ ծավալվեցին ՄԱԿ կողմից ընդունված UNCITRAL ստանդարտի հոդված 10-ի (էլ. թվային ստորագրության վստահություն) և 12-ի (էլ. թվային ստորագրության ճանաչում) ԵԱՏՄ անդամ-երկրներում ներդնելու հնարավոր եղանակների ընտրության հարցերի շուրջ: Քննարկվեց նաև ԵՄ eIDAS դիրեկտիվայի հոդված 14-ի (միջազգային շրջանակներ) կիրառման եղանակների շուրջ: Քննարկվեց նաև միջազգային OASIS DSS և X509 էլեկտրոնային թվային ստորագրության փոխադարձ ճանաչման ստանդարտների, պրոտոկոլների առավելությունները և թերությունները, ԵԱՏՄ անդամ-երկրներում էլեկտրոնային թվային ստորագրությունների փոխադարձ ճանաչման ժամանակ ներդրման հնարավոր տարբերակները: Մասնակիցները կարևորեցին նաև «Համացանցի Ճարտարագիտական Խորհրդի» (IETF) էլեկտրոնային թվային ստորագրությունների փոխադարձ կիրառմանը ներկայացվող պահանջների բավարարումը և դրանց հետևելը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հանդիպման ժամանակ հայկական կողմը ամփոփ ներկայացրեց մինչ այժմ կատարված աշխատանքները: Հանդիպման վարողի՝ էլեկտրոնային թվային ստորագրությունների փոխադարձ ճանաչման գործընթացի ներդրումից հետո՝ գնումների հարթակներում գործարքների կատարման ժամանակ, վերջիններիս իսկությունների ստուգման անհրաժեշտության հարցի վերաբերյալ հայկական կողմը նշեց, որ հնարավորության դեպքում առաջարկվում է չստուգել վստահված երրորդ կողմից ստորագրության իսկությունը: Առաջարկվեց գնումների ոլորտում պետական լիազոր մարմինը կամ հենց գնումների

հարթակները՝ ունենալով անհրաժեշտ ապարատածրագրային գործիքակազմ, իրականացնեն էլեկտրոնային թվային ստորագրության իսկության ստուգում:

Մասնակիցները կարևորեցին «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» պայմանագրի 88-րդ հոդվածին համահունչ աշխատանքների իրականացումը, որտեղ նշված են ԵԱՏՄ պետական (մունիցիպալ) գնումների կարգավորման սկզբունքները և նպատակները:

Ռուսաստանի Դաշնության անվտանգության դաշնային ծառայության ներկայացուցիչը ներկայացրեց Անվտանգության դաշնային ծառայության դիրքորոշումը «ԵԱՏՄ անդամ-երկրների պետական գնումների մասնակցության նպատակով էլեկտրոնային թվային ստորագրությունների փոխադարձ ճանաչման» կանոնների նախագծի վերաբերյալ: Հստակ նշվեց որ Կանոնների նախագծի ներկայացված խմբագրմանը դեմ են և առաջարկում են ԵԱՏՄ անդամ-երկրներում ստեղծել կամ Եվրասիական տնտեսական հանձնաժողովում արդեն իսկ առկա Հավաստագրման կենտրոնին օժտել վստահված երրորդ կողմին սերտիֆիկացման (հավատարմագրման) գործառույթներով: Նշվեց, որ Եվրասիական տնտեսական հանձնաժողովում գործող հավաստագրման կենտրոնը գործառույթներ է իրականացնում պետական մարմինների միջև (G2G) էլեկտրոնային թվային ստորագրությունների փոխադարձ ճանաչման ուղղությամբ, անհրաժեշտ է նաև պատվիրակել գործառույթներ բիզնեսի հետ (B2G) էլեկտրոնային թվային ստորագրության փոխադարձ ճանաչման գործընթացների կարգավորման ուղղությամբ:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ներկայացուցչի կողմից նշվեց, որ անհրաժեշտ է սահմանել և նույնականացնել վստահված երրորդ կողմի սերտիֆիկացման (հավատարմագրման) պահանջները:

Ղազախստանի ներկայացուցիչը նշեց, որ Կանոնների նախագծում պետք է ներառվի էլեկտրոնային թվային ստորագրության ճանաչման ապահովման դաշտերը, էլեկտրոնային թվային ստորագրության փոխադարձ ճանաչման ժամանակ իսկության ստուգման տեխնիկական մասը:

Անվտանգության դաշնային ծառայության ներկայացուցիչը առաջարկեց նաև հստակեցնել, Կանոնների նախագծում ներառել վստահված երրորդ կողմի հետ տվյալների փոխանակման կապի ապահովման կրիպտոգրաֆիկ ալգորիթմների սխեման:

Ռուսաստանի Դաշնության և Ղազախստանի Հանրապետության ներկայացուցիչների ներկայացրած դիրքորոշումներին համակարծիք չէին Բելառուսի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության և Ղրղզստանի Հանրապետության ներկայացուցիչները:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Կողմերը արձանագրեցին այն փաստը, որ ԵԱՏՄ էլեկտրոնային թվային ստորագրությունների փոխադարձ ճանաչման գործընթացը անհրաժեշտ է կազմակերպել այն մոտեցմամբ, որպեսզի հետագայում հնարավոր լինի նաև անդամ-երկրների գնումների էլեկտրոնային հարթակներում իրականացվող գնումների գործընթացներին ապահովել մասնակցություն ոչ ռեզիդենտ կազմակերպություններին:

Կողմերը ձեռք բերեցին պայմանավորվածություն քննարկման ժամանակ հնչած առաջարկությունների հիման վրա փոփոխել Կանոնների նախագիծը և հանդիպման արձանագրությամբ ներկայացնել դիրքորոշման անդամ-երկրների շահառու կառույցներին:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Մովսես Չապանյան

26.07.2022թ.